ԵՐԵԽԱՅԻ ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ԴՐԱՆ ՅԱՋՈՐԴՈՂ ԾԻՍԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Անահիտ Մխիթարեան

Երեխայի ծնունդը միշտ մեծ ու կարեւոր իրադարձութիւն է եղել հայ ընտանիքի ու հասարակութեան համար: Այն սերտօրէն կապուած է գերդաստանի ու սերունդների շարունակականութեան հետ. «ընտանեաց նորածին անդամոց երեւումն ալ կը պահանջէր զուարթ խնճոյք մը, զոր կը յիշատակէ Յաճախապատումն իսկ՝ ցուցանելով սովորութեանս մեծ հնութիւնը. «բազում ուրախութիւն ցուցանեն, կ՚ըսէ, ի ծննդեան, եւ բարեկամօք եւ մերձաւորօք տօն կատարի ծննդեան եւ անուանակոչութեան»[1]:

Միջնադարեան Հայաստանում գործածական է եղել «տղաբերք» եզրոյթը, որը նշանակել է որդեծնութիւն, ծննդաբերութիւն: Հնում կարեւորուել է յատկապէս արու զաւակի ծնունդը, քանի որ նա համարուել է տոհմի շարունակող, օջախի ճրագը վառ պահող, իսկ աղջիկը՝ օտարի ճրագ[2]: «Զատիազանց զօրաւոր էր ընտանիքը մշտնջենաւորելու բնազդը: Ասոր համար անպատճառ մանչ զաւակներ ունենալ կ՚ուզէին: Այս պատճառով մանչ զաւակներու ծնունդը ուրախութեամբ կ՚ընդունէին եւ աղջիկներու ծնունդը, երբ մանաւանդ յաջորդական էր, տհաճութիւն կը պատճառէր, երբ մանաւանդ մանչ զաւակ չունէին դեռ այր եւ կին»[3]: Այնքան էր արժեւորուում տղայ երեխայի ծնունդը, որ հարսը դառնում էր բոլորի, յատկապէս տան մեծերի աչքի լոյսը: Ինչպէս ասում էին ակնցիները. «արուն տան դուռը բաց պահողն էր, շարունակութիւնը ընտանիքին, մինչդեռ աղջիկը՝ օտարին յանձնելի ծաղիկ էր»[4]:

Հայ ընտանիքներում երեխայի ծնունդը համարւում էր իսկական պարգեւ, Աստծու տուած ընծայ: Եւ պատահական չէ, որ «ծնուել» բառի փոխարէն երբեմն կիրառուել է «ընծայուել» ձեւը. «Նախիջեւանցին սովորաբար չի ասում՝ ես ծնուել եմ այսինչ թուականին կամ այս ինչ տեղում, այլ անպատճառ՝ «ես ընծայած եմ» այս ինչ տարին»[5]:

Երեխայի ծննդեան առիթով շնորհաւորում էին՝ ասելով «աչքդ լոյս լինի». «...Աչքի լոյսի պէս սիրելու ու փայփայելու բան է եղել նոցա համար զաւակը, իբրեւ նախախնամութեան տուած պարգեւը, իբրեւ ժառանգ, սերունդը շարունակող, իբրեւ տան, ծնողներին աջակից եւ, վերջապէս, իբրեւ օգնական, աշխատող ոյժ»[6]: Աչքալոյսի մաղթանքն ասուել է նաեւ ամուսնութեան ժամանակ, որովհետեւ թէ՛ ծնունդը եւ թէ՛ ամուսնութիւնը կարեւոր իրադարձութիւններ են եղել հայ իրականութեան մէջ:

Համաձայն քրիստոնէական աշխարհընկալման՝ մարդը ծնւում է նախ՝ մարմնաւոր ծնողներից, որպիսիք իր ծնողներն

---

1 Հացունի Վ., *Ճաշեր եւ խնճոյք Հին Հայաստանի մէջ*, Վենետիկ, 1912, էջ 399: Տե՛ս նոյնի՝ *Հայուհին պատմութեան առջեւ*, Վենետիկ, 1936, էջ 82-84:

2 Տե՛ս Ղանալանյան Ա., *Առածանի*, Եր., 1960, էջ 65-67:

3 *Պատմութիւն Մատթէոս Հայոց*. Տեղագրական, պատմական եւ ազգագրական, համադրեց՝ Արշակ Ալպոյաճեան, Պէյրութ, 1916, էջ 1107:

4 *Ակն եւ ակնցիք*. նախաձեռնեց եւ հաւաքեց Առաքէլ Քէչեան, աշխ., դասաւորեց եւ խմբագրեց Մ. Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 252:

5 Շահազիզ Ե., *Նոր Նախիջեւանը և նորնախիջեւանցիք*, – «Ազգագրական հանդէս» (այսուհետեւ՝ ԱՀ), գրքեր VII և VIII, Թիֆլիս, 1901, էջ 96:

6 Նոյն տեղում:

են, ապա՝ երկրորդ անգամ՝ «Հոգեւոր ծնողներից». «...Եւ այս ծննդեանս Հայր Աստուած է, եւ մայր՝ եկեղեցին, եւ արգանդ՝ աւազանն, որ ծնանի զմանուկն ջրով եւ Հոգով»[7]: Մարդը Մկրտութեամբ հոգեւոր ծնունդ է առնում՝ ծնուելով մկրտութեան աւազանից, որը համեմատւում է մօր արգանդի հետ, եւ կատարեալ չէ այն եկեղեցին. «...Որ ոչ ունի զծնունդս որովայնի իւրոյ»[8]: Ձեռագրերում մենք տեսնում ենք կնոջ եւ եկեղեցու նմանութիւնը. երկուսն էլ ծնում են. մեկը՝ ֆիզիկապէս, միւսը՝ հոգեպէս, որով մարդու ծնունդը դառնում է ամբողջական. «...Եւ զգեցուցանեն կտաւս գեղեցիկս, որպէս հարսն զգեցուցանեն եւ ածեն գաւտիս, որով մկրտութեան սուրբ աւազանը հարսի մը կը նմանեցուի, որ սահմանուած է ծնանել որդիս լուսոյ»[9]:

Երեխայի ծննդեանը յաջորդող ծիսակարգի մէջ դասւում են Մկրտութիւնը, Անուանակոչութիւնն ու Քառասունքը: Կարեւոր են համարուել նաեւ նորածնի պորտ կտրելու, առաջին անգամ եղունգ կտրելու, մազ (մօրամազ) կտրելու, առաջին ատամ հանելու, առաջին քայլերն անելու ժամանակ իրականացուող ծէսերն ու ծիսական գործողութիւնները, որոնք նպաստում էին երեխայի աճին ու զարգացմանը:

Առհասարակ առաջինն ունի ծիսահմայական յատկութիւն, քանի որ այն ինչոր բանի սկիզբն է, ուստի պէտք է կատարուեն հմայածիսական գործողութիւններ՝ հեռացնելով չարը, անյաջողը եւ առաջ բերելով բարին, յաջողութիւնը. «Առաջինն» ունի իրենից յետոյ եկող նման առարկաների եւ գործողութիւնների էութեան ու խնդիրների վրայ ներգործելու հմայական յատկութիւն»[10]:

Անուանակոչութիւնը շատ կարեւոր էր հայ ընտանիքներում: Երեխաներին երբեմն տրւում էին հնագոյն ժամանակների բնապաշտական անուններ, երբեմն էլ՝ ազգագրական տուեալ շրջանին բնորոշ տեղանուններից առաջացած անձնանուններ: Յաճախ էլ նրանց անուանակոչում էին քրիստոնէական սրբերի, նահատակների, գերդաստանի հանգուցեալների անուններով, իսկ երբեմն էլ անուանակոչում էին իրենց երեխաներին՝ ի պատիւ քաջարի հերոսների՝ յուսալով, որ նրանք կը կրեն վերջիններիս լաւագոյն յատկանիշները: Համաձայն կանոնական աղբիւրների՝ Դ. դարից սկսած եկեղեցին երեխայի անուանակոչութիւնը կապել է նաեւ նրա ծննդեան օրը յիշատակուած սրբերի անունների կամ մկրտութեան հետ. «Գր. Նարեկացին կ'ըսէ, թէ «յաւազանէ կոչեցայ Արթուն» (մեկնելով իւր անունը)»[11]: Ծնունդից յետոյ մարդը ստանում է իր անունը, իսկ Մկրտութիւնից յետոյ՝ իր հոգեւոր անունը. «Ծննդեամբն՝ առնումք զանուն մարդոյ, այսպէս եւ Մկրտութեամբն՝ նոր կոչումն ու անուն ստանամք»[12]:

Նորածնի, ինչպէս նաեւ ծննդկանի[13] համար առանձնայատուկ դեր է ունեցել դայեակը[14]: Միջնադարում ստնտուն ու

7 Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Եր., 1977, էջ 149:

8 Ձեռ. 457, Մաշտոց Ա., Թ. կամ Ժ. դ., թղ. 29բ: Տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Գ, *Մաշտոց –Գիրք ձեռնադրութեանց*, յօրինեցին Հ. Բարսեղ Սարգսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1966 (այսուհետ՝ Վենետիկի ցուցակ, հտ. Գ), էջ 12:

9 Ձեռ. 617, Մաշտոց ԻԷ., Աղի կամ Սաղի գիւղ, 1466 թ., թղ. 193ա: Տե՛ս Վենետիկի ցուցակ, հտ. Գ, էջ 258:

10 Օդաբաշեան Ա., *Ամանորը հայ ժողովրդական տօնացոյցում*, – «Հայ ազգագրութիւն և բանահիւսութիւն» (այսուհետ՝ ՀԱԲ), հտ. 9, Եր., 1978, էջ 9:

11 Հացունի Վ., Հայուհին պատմութեան առջեւ, էջ 82:

12 Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 149:

13 Ծննդկանը ծննդաբերող կամ նոր ծննդաբերած կինն է, նորածնի մայրը: Ազգագրական որոշ շրջաններում ծննդկանին ասում էին նաև «տղացկան» կամ «տղոցկան»:

14 Դայեակը կարող էր լինել նաև մանկաբարձուհի կամ տատմայր:

սնուցողը կատարել են նաեւ դայեակի որոշակի գործառույթներ. «Ազնուական տղային ամբողջ սնուցման հոգը ստանձնած էր դայեակը, - սեռը ճշդելու հարկին կոչուած նաեւ դայեակ այր եւ դայեակ կին: ...Բայց դայեակը լայնաբար կը կոչուի նաեւ սնուցիչ»[15]: Վաղ շրջանում դայեակն ունեցել է նաեւ ստնտուի գործառույթը, իսկ յետագայում փոխուել են նրա պարտականութիւնները. «...Դայեակը իր պարտականութիւնը կը կատարէ, այսինքն՝ կը լուայ նորածինը, պորտը կը կապէ, կ'աղէ եւ կը փաթաթէ խանձարուրի մէջ: Տղաձգանը[16] կ'երթայ անկողնոյն մէջ՝ քովը առնելով իր նորածինը: Բարձին վրայ կը դրուի մկրատի մը ծայրը մխուած չոր սոխ մը, որ Մեղմէ աղէկները կամ Ալը չյանդգնին գալ ու յափշտակել երախան»[17]: Դայակն իր նուիրուած աշխատանքի համար վարձատրւում էր. «Դայեակը տղաձգանի տնէն նուէր կ'ընդունի ուրիշ անգամներ ալ, մէկ մը «պօրտ կտրելուն» եւ մէկ մ'ալ երախան «միւռոնէն հանել»-ուն համար, պորտ կտրելու ատեն մկրատը պորտին վրայ դրած կ'ըսէ. «Պորտ կըյրիմա», ներկաններն ալ կը պատասխանեն. «Վարձդ կատար»[18]:

Երեխայի ծնուելուց յետոյ կատարւում էին կարեւոր ծիսական գործողութիւններ՝ կապուած «պորտը կտրելու» հետ: Տատմայրը, երեք անգամ խաչակնքելով ու «Հայր մեր»-ն ասելով, կտրում է երեխայի պորտն ու բամբակէ թելով կապում: Տղայ երեխայի պորտը հեռու ու ընդարձակ տեղ էին գցում՝ հաւատալով, որ մեծ շրջապատ կ'ունենայ եւ հասարակութեան մէջ յարգուած մարդ կը դառնայ, իսկ աղջկայ պորտը թաղում էին տան մի անկիւնում, որպէսզի յետագայում նա համեստ ու ամօթխած տանտիկին լինէր[19]: Որոշ վայրերում էլ նորածնի պորտը կտրելուց յետոյ եկեղեցու տանիքն էին գցում, որպէսզի եկեղեցասէր լինէր[20]: Երբ տատմայրը լողացնում էր նորածնին, ասում էր. «Էս ջրի պէս ումրդ երկար ըլի, Աստծու աջողութիւնը վրէդ ըլի, մսոտ ըլիս, լաւ ըլիս, ուրախ ըլիս»[21]: Կամ քաշում էր երեխայի վզից, որպէսզի երկար վիզ ունենար, ասում էր. «Էրկան վզիկ, թա՛փ տուր ցաւիկ, շալկէ մսիկ»[22]: Լողացնելու ընթացքում մերսում էր երեխայի մարմինը՝ փորձելով զարգացնել մարմնի, դէմքի մկանները, քիմքը՝ առողջ ու գեղեցիկ լինելու նպատակով: Իսկ երեխային ջրից հանելիս վրան աղ էր ցանում (նաեւ բերանի մէջ) եւ ասում. «Աստուած, դու պահես էս երեխին, չարէն թափես, դեւից ազատես, ամէն փորձանքից դու պահես, պահպանես»[23]: Ապա բարուրում էր նորածնին, բարուրի վրայ մի կտոր հաց դնում, դուրս էր հանում տանից, պահում դէպի արեւելք՝ ասելով. «Սուրբ բեգնակ, էս երեխի փայը տաս, երկնքիցը ցօղ ցօղայ, գետնիցը պտուղ ստանայ»[24] ողջ բնութեանը մասնակից դարձնելով երեխայի օրհնութեանը: Յետոյ տուն էր մտնում, երեք անգամ խաչակնքելով, դնում ծննդկանի աջ կողմում[25]: Ընդհանրապէս մանկան բարուրը միշտ դրել են մօր աջ կողմում, քանի որ աջը համարուել է բարի հրեշտակներով պաշտպանուած ու յաջողութեան խորհրդանիշ:

---

15 Հացունի Վ., *Դաստիարակութիւնը հին հայոց քով*, Վենետիկ, 1923, էջ 20:

16 Մալաթիայում ծննդկանին ասում էին «տղաձգան»: Տե՛ս նաև Շահազիզ Ե., *Նոր Նախիջևանը և Նորնախիջևանցիք*, էջ 96:

17 Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, էջ 1124:

18 Նոյն տեղում, էջ 1125:

19 Լալայեան Ե., *Վարանդա*, – ԱՀ, գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 146:

20 *Ակն եւ ակնցիք*, էջ 293:

21 Լալայեան Ե., *Բորչալուի գաւառ*, – ԱՀ, գիրք IX, Թիֆլիս, 1902, էջ 252:

22 Նոյնի՝ *Ջաւախք*, – ԱՀ, գիրք Ա., Շուշի, 1895, էջ 269:

23 Նոյնի՝ *Բորչալուի գաւառ*, էջ 252:

24 Նոյն տեղում:

25 Տե՛ս Լալայեան Ե., *Վարանդա*, էջ 147: Նոյնի՝ *Սիսիան*, – ԱՀ, գիրք Գ., Թիֆլիս, 1898, էջ 228:

Պատմաազգագրական գրեթէ բոլոր շրջաններում նորածնին լողացնելուց անմիջապէս յետոյ մարմնի վրայ աղ էին ցանում: Աղը համարւում էր առողջարար միջոց, քանի որ ունէր ախտահանող յատկութիւն, բացի այդ պաշտպանում էր չարից: Հնում աղով ծիսահմայական գործողութիւններ կատարելու սովորութիւն կար, քանի որ ժողովրդական հաւատալիքներում աղն ունեցել է նաեւ հմայական զօրութիւն. «...եւ յամենայն չարժմակս բժժանաց, հմայից, դիւթաց, յորս կոչեն զդիւսն յաղ, յերկաթ, ի ջուր, նարաւտս, յիւղս, ի գարի, ի յուլունս, ի մոմ, եւ ի հեր գլխոյ եւ յամենայն պղծութիւնս, որով պղծենն եւ կորուսանեն զոգիս հնազանդելոցն»[26]:

Հնագոյն ժամանակներում աղի պաշտամունքը կապուած էր պտղաբերութեան հետ. «Աղը Անահիտ դիցուհուց անբաժանելի է. այդ երկուսը միասնաբար հովանաւորում են մօրն ու մանկանը: Դա արտայայտւում էր նրանով, որ աղը պահւում էր Անահիտ դիցուհուն պատկերող կանացիակերպ կաւէ աղամանների մէջ: Ամենայն հաւանականութեամբ, հին հայերը աղը համարում են Անահիտի պարգեւը, որով եւ պէտք է բացատրել նորածին մանկան վրայ աղ ցանելու, ինչպէս նաեւ մարդկանց եւ տան անմաքրութիւնն աղով մաքրելու սովորութիւնները»[27]:

Աղի պաշտամունքը շարունակուել է քրիստոնէութեան շրջանում որպէս մաքրութեան ու առողջութեան խորհրդանիշ. «Օրհնեա՛, Տէ՛ր, ողորմութեամբդ քո զաղս, զի յամենայն ինչ, յոր եւ խառնեսցի սա, եղիցի մեզ ի սրբութիւն քաւութեան եւ ի թողութիւն մեղաց...»[28]:

Աղը մատուցւում է կենդանու զոհաբերութիւնից առաջ: Այսինքն՝ սրբագործումը կատարւում է օրհնած աղի միջոցով, իսկ երբ քառասուն օրը լրանալուց յետոյ երեխային տանում են եկեղեցի, քահանան, վերցնելով երեխային, մօտենում բեմին՝ որպէս ընծայ մատուցելու Աստծուն:

Երեխայի ծննդեան հօթերորդ օրը լրանալուց յետոյ եկեղեցում մկրտում էին, իսկ քառասուն օրը լրանալուց յետոյ՝ քառասունքից հանում: Քառասունքից յետոյ եւ՛ մայրն է լողանում, եւ՛ երեխային են յատուկ արարողութեամբ լողացնում, որից յետոյ միայն մայրը երեխայի հետ (նրանց հետ կարող է լինել նաեւ դայեակը կամ մանկաբարձը) գնում է եկեղեցի՝ կատարելու Քառասուներորդ օրուայ կարգ, որը Մաշտոց ծիսական ժողովածուներում կոչւում է «Կարգ Քառասնօրէին»: Քառասուներորդ օրուայ կարգը կատարւում է ոչ միայն երեխայի, այլեւ մօր՝ ծննդկանի համար, որոնք եկեղեցի են գնում՝ ընծայման. «Իսկ յետ խ աւուր՝ գան ի դուռն եկեղեցւոյն. եւ մայրն խոստովանի քահանային եւ խ ծունր կրկնէ եւ առնու զտղայն ի գիրկն»: Եւ քահանան այս աղօթքն ընթերցում է նախ ծննդկանի համար. «Աստուած մեր, որ եկիր ի փրկութիւն ազգի մարդկան, նայեա՛ ի վերայ աղախնոյս քո. եւ տուր՝ սմա՝ ապաւինիլ ի Սուրբ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի քո. մտանել ի տաճար Սուրբ քո, եւ հաղորդիլ փրկական մարմնոյ եւ արեան քո: Ի բա՛ց լուա զաղտ մարմնոյ եւ

---

26 Յովհան Մանդակունի, *Մաղթ* (ԻԶ. «Թուղթ վասն հմայից դիւթականաց եւ անաւրէն յուտթողաց»): Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1264:

27 Բդոյեան Վ., *Հայ ազգագրութիւն. համառօտ ուրուագիծ*, Եր., 1974, էջ 199:

28 «Օրհնութիւն աղի», *Մաշտոց. արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց*, բաղդատութեամբ բազմաթիւ եւ հնագիր օրհնակաց իբր յիսնից նաեւ հնագոյն երկաթագիր ձեռագրի, Վենետիկ, 1831 (այսուհետեւ՝ *Մաշտոց*, Վենետիկ, 1831), էջ 687:

զբիծ հոգւոյ սորա ի լրումն կատարման քառասնօրեայ աւուրցս...»[29]:

Քառասունքի ընթացքում մայրը մաքրւում է արիւնահոսութեամբ, հետեւաբար այդ օրերին արգելւում է նրա մուտքը եկեղեցի: Ըստ Հին կտակարանի՝ մայրը երեխայի ծնունդից սկսած քառասուն օր անմաքուր բաների չպիտի ձեռք տայ եւ որեւէ սրբարան չպէտք է մտնի, մինչեւ աւարտուեն նրա մաքրուելու օրերը (Ղեւտ., ԺԲ. 4): Տանն առանձնացնում էին ծննդկանի համար նախատեսուած սպասքի պարագաները եւ թոյլ չէին տալիս, որ նա իր ձեռքով որեւէ բան վերցնի կամ պատրաստի[30], քանի որ նա համարւում է անսուրբ եւ ոչ մաքուր, ուստի դիւրամատչելի էր չարին:

Աւարտելով ծննդկանին ուղղուած աղօթքը՝ քահանան պահպանիչ մի աղօթք էլ հնչեցնում է նորածնի համար. «Տէր Աստուած, որ նորոգութիւնդ ես հնացելոց եւ կեանք՝ մահկանացու ազգի մարդկան, դո՛ւ ես զօրութիւն եւ օգնութիւն ապաւինելոցս ի քեզ: Հաստատուն լիցի շնորհք ողորմութեան քո ի վերայ տղայիս, որ եկեալ կայ քառասնօրեայ ի ձեռնադրութեան քրիստոնէութեանն, զի եղիցի հզօր եւ անսերկիւղ ի թշնամւոյն ներգործութենէ, պահպանութեամբ աջոյդ քո սրբոյ, զի դու ես մերձ յամենեսին եւ բարերար ամենեցուն...»[31]:

Այս արարողութիւնը կատարւում է եկեղեցու դռան առջեւ, որից յետոյ միայն մտնում են եկեղեցի, մայրը քառասուն անգամ ծունր է իջնում սուրբ սեղանի առաջ, իսկ քահանան աղօթում է՝ յիշատակելով քառասնօրեայ մանուկ Յիսուսին տաճար տանելն ու Աստծուն ընծայելը. «Տէր Աստուած մեր, որ յաւուրս քառասուն ըստ օրինացն ի տաճարն եկիր յընծայումն հանդերձ Մարեմաւ մարբ քո եւ ի գիրկս արդարոյն Սիմէոնի գգուեցար»[32]: Ապա քահանան, վերցնելով երեխային, մօտենում է խորանին. «Յետ այսորիկ առնու քահանայն զտղայն եւ հանէ ի բեմն եւ երիցս երկրպագեցուցանէ սուրբ սեղանոյն՝ ասելով. Այս անուն նորընծայ երեխայս՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, եկեալ քառասնօրեայ ի տաճարս յայս յերկրպագութիւն սուրբ սեղանոյս, երկիր պագանէ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»[33]:

Իւրաքանչիւր անցումային ծէսից յետոյ (ծնունդ, ամուսնութիւն, մահ) կատարւում են քառասունքին առնչուող ծիսական արարողութիւններ: Քառասուն օրը մի ժամանակահատուած է, որի ընթացքում թէ՛ նորածինը, թէ՛ նորապսակը եւ թէ՛ հանգուցեալը մտնում են մի նոր աշխարհ, նոր միջավայր, ուստի այդ անցումը պէտք է լինի բարեյաջող, անվտանգ ու ապահով:

«Հայոց ծիսակարգում քառասունքը կիրառւում է որպէս չար ուժերի հնարաւոր ազդեցութեան շրջան: Այս առումով շատ յատկանշական է երեխայի ծննդի հետ կապուած քառասունքի սովորոյթը, երբ եռծննդեան առաջին քառասուն օրը համարւում էր երեխայի եւ ծննդկանի վրայ չար ուժերի հնարաւոր ազդեցութեան շրջան»[34]:

Քառասունքը ծննդկանին եւ նորածնին չար ուժերից պաշտպանելու յետծննդեան քառասնօրեայ արգելքների համալիր է. այդ ընթացքում նորածնին ու ծննդկանին մեկուսացնում էին՝ վերջինիս առողջական վիճակը վերականգնելու, նրանց նկատմամբ յատուկ խնամք տածելու նպատակով: Չնայած նորածնի քառասունքի

29 *Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ*, յորում հաւաքեալ աւանդին ըստ մեծի մասին Կարգք և Կանոնք արարողութեան Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցւոյ, Պոլիս, 1807 (այսուհետեւ՝ Մաշտոց, Պոլիս, 1807), էջ 19բ:

30 Լալայեան Ե., Սիսիան, էջ 229:

31 *Մաշտոց*, Կ. Պոլիս, 1807, էջ 19բ:

32 *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 41:

33 Նոյն տեղում:

34 Թադեւոսեան Ա., *Դարբինը հայոց ծիսակարգում* (պատմաազգագրական ուսումնասիրութիւն), – ՀԱԲ, հտ. 23, Եր., 2007, էջ 121:

ծէսերն ու ծիսական սովորոյթները շատ վաղ արմատներ ունեն, սակայն երբեմն միախառնւում են նախաքրիստոնէականի ու քրիստոնէականի սահմանները: Քառասունքի մէջ գտնուելու շրջանը թէ՛ ծննդկանի եւ թէ՛ նորածնի համար շատ կարեւոր էր, ուստի պահւում էր յետծննդեան քառասնօրեայ արգելքների շրջան, օրինակ՝ մայրն ու երեխան չպէտք է լինէին արեւի տակ, հետեւաբար երեխային ցերեկը դուրս չէին հանում, իսկ գիշերները հանելիս կրծքին մի կտոր հաց էին դնում: Նրանց չէին թողնում մութ սենեակում, ճրագը միշտ վառ էին պահում: Աշխատում էին երբեք միայնակ չթողնել, իսկ եթէ ստիպուած էին լինում, ապա մի աւել էին դնում նրանց մօտ[35]: Թէ՛ մօր եւ թէ՛ երեխայի բարձի տակ դնում էին Աւետարան, Նարեկ, հմայիլ, հաց, սխտոր, մկրատ, դանակ, դաշոյն[36], որպէսզի չարքերը չմօտենան եւ չվնասեն նրանց: Ծննդկանը քառասունքի ընթացքում չպէտք է լողանար, տանից դուրս գար, կենցաղային ծանր աշխատանքներ կատարէր (խմոր հունցել, կով կթել, լուացք անել եւ այլն), չպէտք է այցելէր քառասունքի մէջ գտնուող նորապսակներին, ծննդկաններին, մեռելատուն չպէտք է գնար: Այդ ընթացքում արգելւում էր նաեւ կենակցել: Եւ այս ամենն արւում էր չար ուժերից պաշտպանուելու նպատակով:

Պատմական Հայաստանի ազգագրական շրջաններում կատարուող ծիսահմայական պաշտպանիչ արարողութիւնները հիմնականում նոյնաբնոյթ էին: Դրանց նպատակն էր ոչ միայն պահպանել մօրն ու մանկանը չար ուժերի ազդեցութիւններից, այլեւ նպաստել ծննդկանի առողջութեան վերականգնմանը, նորածնի առողջ աճին, ինչպէս նաեւ ապահովել ընտանիքում սերունդների շարունակականութիւնը:

Քառասունքից հանելու ծէսերը, որոնցով աւարտւում էին ծիսահմայական արարողութիւնները, կատարւում էին քառասունքի վերջին օրը (օրինակ՝ արեւին դուրս էին հանում երեխային եւ երեսը պարզում դէպի արեւը, լողացնելիս քառասուն թաս (բաժակ կամ գդալ) ջուր էին լցնում թէ՛ մօր եւ թէ՛ մանկան գլխին (քառասուն անգամ):

Նորածնին պաշտպանելուն, նրա առողջութիւնն ու յաջողութիւնն ապահովելուն էին միտուած բոլոր ծէսերն ու ծիսական սովորոյթները՝ աղաջրում լողացնելը, օրօրոցից հմայիլներ կախելը, բարձի տակ դանակ, մկրատ կամ որեւէ մետաղ դնելը եւ այլն: Երկաթէ չարխափան հմայիլները (մատանի, ապարանջան, վզնոց), որոնք ունէին մոգական ուժ, կոչուած էին ապահովելու նաեւ հարսների յղիութեան եւ ծննդաբերութեան յաջող ընթացքը. «Սակայն որպէսզի պատրաստուող առարկան ունենար բարերար ու չարխափան ուժ ու կարողութիւն, դարբինն այն պէտք է պատրաստէր մուրճի քառասուն հարուածով: Դրանից աւել կամ պակաս հարուածների թիւը գցում էր հմայիլի զօրութիւնը: ...Ծիսական քառասուն հարուածների թիւը նշում է, որ դրանք անհրաժեշտ են արարչագործութեան համար»[37]:

Նորածնի ծննդեան ու յետծննդեան ծէսերն ու ծիսական սովորոյթները, որոնք ունեն արխայիկ բնոյթ, ինչպէս նաեւ բնապաշտական տարրեր, ժամանակի ընթացքում միշտ կրել են փոփոխութիւններ՝ հիմքում պահպանելով նախնական խորհրդանշական իմաստը:

---

35 Լալայեան Ե., *Գանձակի գաւառ*, ԱՀ, գիրք Զ., Թիֆլիս, 1900, էջ 278:

36 Ըստ ժողովրդական ընկալման՝ մետաղեայ իրերն ունեն գերբնական և չարխափան յատկութիւններ:

37 Թադևոսեան Ա., *Դարբինը հայոց ծիսակարգում* (պատմաազգագրական ուսումնասիրութիւն), – ՀԱԲ, էջ 118: